# Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ  Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 1)**

20 հունվարի 2012թ. ժամը 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստա-մարաթոն-2012» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)

2. «Սեյվ Դը Չիլդրեն Ֆեդերեյշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» ծրագրի մասին:
(Գևորգ Եղիազարյան)

3. Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին:
(Համիկ Հարությունյան)

4. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում) ծրագրի մասին:
(Ալիսա Բադալյան)

5. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բուժական օգնություն ծրագրի մասին:
(Ալիսա Բադալյան)

6. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգում» ծրագրի մասին:
(Հուսիկ Սարգսյան)

## 7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

7.1 «Հայաստանի Ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.2 Հայաստանի Հանրապետություն առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.3 «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:



7.4 «Հայ օգնության ֆոնդի» հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.5 Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

## 8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Մատենադարան» հիմնադրամ):

8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):

8.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

## 9. Այլ հարցեր

9.1 «Բարձրունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող գույքի նվիրատվության մասին :

9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-623-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-897-Ա որոշման մեջ

փոփոխություններ կատարելու մասին (Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ):

9.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1143-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ):

9.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1118-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին (Ամերիկյան հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ):

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2012 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2012» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի -ի N -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 150000000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հեռուստամարաթոն-2012» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՐՏ ԹԻՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01559903) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-25/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վավերագրական կինոնկարի սցենարի ստեղծում՝ 2995200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513906) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-21/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վավերագրական կինոնկարի նկարահանման աշխատանքների իրականացում՝ 33945600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

3) «ՄՐԱՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01559911) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-24/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վավերագրական կինոնկարի հետարտադրական աշխատանքների իրականացում՝ 12556800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«12» հունվարի 2012թ.

# «Հոբելյանական Հեռուստամարաթոն – 2012»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նախապատրաստել հիմնադրամի 20-ամյակի միջոցառումները և բարեգործական դրամահավաքին նվիրված «Հեռուստամարաթոն-2012»-ի պատշաճ անցկացումը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ և ԼՂՀ, սոցիալ-տնտեսական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 150.000.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ և ԼՂՀ ազգաբնակչությունը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հունվարի 12-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԱՐՏ ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀՀ-ի 20-ամյա գործունեության վերաբերյալ վավերագրական կինոնկարի սցենարի ստեղծում՝2.995.200,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>«Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից մինչև 30 րոպե տևողությամբ վավերագրական կինոնկարի նկարահանում՝ 33.945.600,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |



| | | |
|---|---|---|
| | | «ՄՌԱԾ» ՍՊԸ-ի կողմից վավերագրական կինոնկարի հետարտադրական աշխատանքների /մոնտաժային, վիզուալ էֆեկտների, գունազատման, ձայնային մոնտաժի, մաստերինգի և երաժշտության օգտագործման իրավունքների ձեռքբերման և օգտագործման/ իրականացում՝ 12.556.800,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>**Նախատեսվում** է նաև տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնի և 20-ամյակին նվիրված միջոցառումների անցկացման շրջանակներում 100.502.400,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն համապատասխան մարզպետարանների հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

էջ 1/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

175-12
19.01.12

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 13-ի**
**15/15.1/247-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2012» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/1171-12

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԿՊԿ/3-4/248-12
16.01.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.01.2012թ. թիվ 15/15.1/247-12 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2012» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/886-12

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2012 թվականի N Մ- -Ա** ժր. 1/2
**քաղ. Երևան**

**«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի -ի N 3.8-1/ -12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի -ի N , Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի -ի N ՀՔ/22/ -12, Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի -ի N -12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի -ի N ԱԱ/3-4/ -12 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է**.

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 15857090 դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջ սնունդ» ծրագիրը (կցվում է):

2. «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Մ-1/2

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Ի. Սաղոյանի կողմից

..............................

0... դեկտեմբերի 2011 թ.

01519077 Հայաստանյան մասնաճյուղ Armenian Division

«ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Խթանել առողջ սննդի օգտագործումը տարրական դպրոցի երեխաների շրջանում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Միավորված ազգերի կազմակերպության պարենի համաշխարհային ծրագիր, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան 0010, Պետրոս Ադամյան 14 |
| 4 | Ծրագրի կատարողը | «Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշըն ինկ.»/ ՍՉ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Ք. Երևան, Ազաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 01519077 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, Երևան և Արմավիր<br>Բնագավառը՝ առողջապահական: |
| 6 | Ծրագրի բյուջեն («ՄԱԿ-ի »-ի պարենի համաշխարհային ծրագրի մասով) | 15,857,090 դրամ (կամ 42,857 ԱՄՆ դոլար՝ հաշված 370 փոխարժեքով) |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ հանրակրթական տարրական դպրոցի աշակերտները/ 1-4 դասարաններ: |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի մայիսի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի հիմնական նպատակին հասնելու համար նախատեսվում է.<br>• Մշակել առողջ սննդի վերաբերյալ կրթական նյութ, ներառյալ " Առողջ սնունդ" ուսուցչի ձեռնարկը և " Առողջ սնունդ" ուսուցողական նյութերը տարրական դասարանների աշակերտների համար,<br>• իրականացնել մշակված նյութի փորձարկման համար ընտրված դպրոցների ուսուցիչների վերապատրաստում,<br>• ընտրված դպրոցներում իրականացնել մշակված նյութի փորձարկումը,<br>• ներկայացնել մշակված նյութը ՀՀ Կրթության և գիտության և առողջապահության նախարարություններ՝ վերանայման և հաստատման,<br>• տպագրել մշակված և հաստատված ձեռնարկները:<br><br>Ընդամենը ըստ եռամսյակների պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը. |

| Եռամսյակ | Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (հազ. դրամ) | Կրթական նյութերի մշակման ծառայությունների մատուցում (հազ. դրամ) | Վերապատ.Դասընթացների կազմակերպում և իրականացում (հազ. դրամ) | Տպագրական ծառայությունների մատուցում (հազ. դրամ) | Գործառնական ծախսեր (հազ. դրամ) | Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| IV - 2011 | 257.15 | | | | 55.50 | **312.65** |
| I – 2012 | 771.45 | 1,983.20 | 577.20 | | 166.50 | **3,498.35** |
| II – 2012 | 514.30 | | · | 9,820.91 | 111.00 | **10,446.21** |
| Ընդամենը | 1,542.90 | 1,983.20 | 577.20 | 9,820.91 | 333.00 | 14,257.21 |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և | • Ծրագրում ընդգրկված ՍՉ-ի աշխատակազմի աշխատավարձը - 1,542,900 դր.<br>• Կրթական նյութերի մշակման ծառայությունների մատուցում – 1,983,200 դր.<br>• Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում - 577,200 դր.<br>• Տպագրական ծառայությունների մատուցում – 9,820,910 դր. |



| | | |
|---|---|---|
| | նախատեսվող գինը | • Գործունեության և տրանսպորտային ծախսեր (գործուղումներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում ) - 333,000 դր. |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | • Սպասարկող աշխատակազմի աշխատավարձը - 1,205,830 դր.<br>• Օպերացիոն ծախսեր - 394,050 դր., ներառում է գրասենյակի վարձը, զրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում ՍՉ-ն կհամագործակցի ՀՀ Կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության, նշված նախարարությունների և ընտրված դպրոցների կողմից և ընդգրկում է հետևյալ գործողությունները.<br>• Ֆինանսական մոնիթորինգ;<br>• Ադմինիստրատիվ վերահսկողություն;<br>• Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


16.01.12 №3/3.8-1/226-12

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.01.12թ. N 15/15.1/168-12 գրության՝ կապված <<Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.>> կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող <<Առողջ սնունդ>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

024/786-12

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am


110-12
16.01.12

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 11-ի 15/15.1/168-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ Գ. Մուրադյան

025/876-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. 1/2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

13.01.12 N ՀՓ/22/110-12

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր12.01.2012թ. թիվ 15/15.1/168-12 գրության կապակցությամբ՝ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

020/577-12

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող Ն.Փափախչյան*
*հեռախոս 52 27 21*

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

**DEPUTY MINISTER**

Ա. 1/2

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/252-12 17 01 2011

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հունվարի 11-ի №15/15.1/168-12 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝*** ***Մ.ՄԿՐՏՉՅԱՆ***

031/1019-12

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** № 1/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԱ/3-4/183-12
13.01.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.01.2012թ. թիվ 15/15.1/168-12 գրությանը կից ներկայացված «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Առողջ սնունդ» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Կատարող՝ անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/700-12

---

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**— ———— 2012 թվականի N Մ-  -Ա** № 1/3

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ ԵՎ ԴԵՂԱԿԱՅՈՒՆ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/284-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 8459-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N ՀՔ/15-1/12192-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 12-ի N ԱԱ/3-4/127-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է .***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ՝ 02507171) իրականացվող՝ 7911011 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
[illegible] առողջապահության նախարարության
Աշխատակազմի ղեկավար
Ս. Քրմոյանի կողմից
«27» դեկտեմբերի 2011 թ.

# «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կրճատել տուբերկուլոզի (ՏԲ) բեռը Հայաստանի Հանրապետությունում՝ բարձրացնելով ՏԲ վերահսկման, որակյալ բուժման ծառայությունների մատչելիությունը, և բնակչության անվճար հակատուբերկուլոզային բուժօգնությամբ ապահովելով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Շնորհառուն | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վերնիեր, Ժնև, Շվեյցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խումբ<br>Կառավարության տուն 3, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>ՀՎՀՀ 02507171 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և ոլորտը | Ծրագրով նախատեսված [illegible] միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ մարզերում:<br>Ծրագրի [illegible] առողջապահություն: |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | 7911011 (յոթ միլիոն ինը հարյուր տասնմեկ հազար տասնմեկ) եվրոյին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տուբերկուլոզով հիվանդ ՀՀ քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևանում տուբերկուլոզի բուժմամբ և կառավարմամբ զբաղվող բժշկական հաստատությունները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը (1-ին փուլ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն ծրագիրը հանդիսանում է 2009 թ.-ի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա ծրագրի 2-րդ փուլի և 2010թ. փետրվարի 18-ի N Մ-90-Ա ծրագրի 1-ին փուլի շարունակական միահոսք ֆինանսավորման ծրագիր՝ ուղղված ՀՀ-ում տուբերկուլոզի ազգային ծրագրի ուժեղացմանը և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնմանը: Ծրագրի առաջին փուլի սահմանված ժամկետն է 2012 թ. հունվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, որից հետո Գլոբալ հիմնադրամի հնարավոր հաստատմանը կներկայացվի ծրագրի 2-րդ փուլի առաջարկը՝ լրացուցիչ 3 տարի ժամկետով:<br>Ծրագրի շրջանակներում վերոնշյալ 1-ին փուլով նախատեսված ժամկետներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝<br><br>1. Տուբերկուլոզի կառավարման և ախտորոշման որակը բարձրացնելու նպատակով առողջապահական համակարգի բժիշկների և բուժքույրերի, լաբորատոր ցանցի մասնագետների, դեղակայուն տուբերկուլոզի կառավարմամբ և բուժմամբ զբաղվող անձնակազմի վերապատրաստման ներքինիշյալ դասընթացների կազմակերպում՝ 270490 եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր): |

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Դեղակայուն տուբերկուլոզի կառավարման վերաբերյալ վերապատրաստում արտասահմանում (տարեկան 6 մասնակից) | 23280 | 23280 | 23280 |
| Դեղակայուն տուբերկուլոզի կառավարման տեղային դասընթացների կազմակերպում միջազգային փորձագետ/դասավանդողների կողմից տուբերկուլոզի ստացիոնար բուժում իրականացնող մասնագետների համար (տարեկան 20 մասնակից) | 8200 | 8200 | 8200 |
| Դեղակայուն տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր բուժումն իրականացնող մասնագետների վերապատրաստում (տարեկան 20 մասնակից) | 9400 | 9400 | 9400 |
| Տուբերկուլոզային դասընթացներ առողջության առաջնային պահպանման օղակի բժիշկների և բուժքույրերի համար (նախատեսվում է ծրագրի իրականացման 2-րդ տարում կրթել 1200 մասնակից, և 3-րդ տարում 900 մասնակից) | 0 | 49200 | 36900 |
| Տուբերկուլոզի ամբիոններում դասավանդողների կրթում (նախատեսվում է ծրագրի իրականացման 2-րդ տարում կրթել 25 մասնակից) | 0 | 1250 | 0 |
| Տուբերկուլոզի ոլորտում վարակի վերահսկման ուժեղացման նպատակով բուժանձնակազմի վերապատրաստում (նախատեսվում է ծրագրի իրականացման 2-րդ տարում կրթել 1000 մասնակից) | 0 | 50000 | 0 |
| Տուբերկուլոզի ծրագրի մշտադիտարկման և գնահատման պարբերական հանդիպումների կազմակերպում (տարեկան 2 հանդիպում) | 2000 | 2000 | 2000 |
| Դասավանդման համար անհրաժեշտ նյութերի մշակում փորձագետների կողմից | 1800 | 2700 | 0 |

3

Դասընթացների մասնակիցները ընտրվում են «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից՝ տուբերկուլոզային և առողջության առաջնային պահպանման հաստատություններից վերջին 3 տարիների ընթացքում վերապատրաստում չանցած մասնագետների ցուցակների հիման վրա, որոնք տրամադրվում են գրասենյակին մարզային առողջապահության վարչությունների, ինչպես նաև Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի կողմից: Դասընթացներում ընդգրկվող մասնակիցների ցանկերը համաձայնեցվում են նաև ՀՀ առողջապահության նախարարության հետ:

2. Տուբերկուլոզի էլեկտրոնային կառավարման ցանցի ստեղծում՝ ՀՀ տուբերկուլոզային կենտրոններում՝ 95769 եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Համակարգի սպասարկման մասնագետի ծառայությունների վճար | 7200 | 7200 | 5400 |
| Ինտերնետ ծառայության վճար: Առաջին տարում նախատեսվում է պիլոտային գործարկում 13 ՏԲ կենտրոններում: 2-րդ տարվա մեջ կընդգրկվեն բոլոր ՏԲ կենտրոնները: Գումարը ներառում է նաև ինտերնետի տեղադրման միանվագ վճարը: | 6300 | 43074 | 26595 |

3. «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին կտրամադրվեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ միջմարզային հանձնաժողովների մշտադիտարկման այցերի, տուբերկուլոզի համակարգողների ինչպես նաև միջմարզային կոմիտեների պարբերական հանդիպումների կազմակերպման, ազգային ռեֆերենս լաբորատորիայի գործունեության աջակցման և վերահսկողական նպատակների համար՝ 231840 եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

Հ.1/3

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Տուբերկուլոզային հաստատություններից ազգային ռեֆերենս լաբորատորիա խորխի տեղափոխման համար անհրաժեշտ ծախսերի փոխհատուցում | 17280 | 17280 | 17280 |
| Տուբերկուլոզի ազգային ծրագրի աշխատանքների կատարումն ապահովվելու նպատակով լրացուցիչ ֆինանսական աջակցություն | 60000 | 60000 | 60000 |



4. Կիրառվիրվեն միջազգային փորձագետներ դեղակայուն տուբերկուլոզի կառավարման բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցության տրամադրման նպատակով՝ 107265 եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Դեղակայուն տուբերկուլոզի հակազդման ծրագրի վերանայման տեխնիկական աջակցություն՝ համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարածաշրջանային ծրագրի | 15956 | 15956 | 15956 |
| Տուբերկուլոզային դեղամիջոցների կառավարման բարելավման ընթացակարգի մշակում | 8340 | 8340 | 8340 |
| Արտազնա հիվանդների խնամքի ռազմավարության մշակում | 3634 | 0 | 0 |
| Տուբերկուլոզ/ՁԻԱՀ վերահսկման համակարգի բարելավում | 6893 | 6893 | 5725 |
| Մշտադիտարկման և գնահատման ազգային ծրագրի մշակում | 11232 | 0 | 0 |

5. Տուբերկուլոզով հիվանդների սոցիալական ապահովության աստիճանը բարձրացնելու նպատակով կտրամադրվի սոցիալական աջակցություն՝ 2155395 եվրոյին համարժեք դրամ: Նախատեսվում է դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացում «Հայկական Կարմիր Խաչի ընկերություն» ՀԿ-ին՝ որպես մասնակից կողմ (գումարի շրջանակներում

Հ.1/3



կազմակերպությունը բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հաստատմանը կներկայացնի առանձին ծրագիր):

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. եվրոյին համարժեք դրամ |
|---|---|---|---|
| ռեգոլյար և դեղակայուն տուբերկուլոզով հիվանդներին բուժման ամբուլատոր և ստացիոնար փուլերում կբաշխվեն սննդային և հիգիենիկ փաթեթներ.<br>- 52 հիվանդի ստացիոնար բուժման փուլում շաբաթական 1 անգամ կտրամադրվի թարմ սննդի փաթեթ<br>- Ամբուլատոր փուլում գտնվող հիվանդներին կհատկացվի մինչև 2 սննդային և 1 հիգիենիկ փաթեթ (4248 դեղակայուն հիվանդ/փաթեթ, 6000-8000 ռեգոլյար հիվանդ/փաթեթ տարեկան) | 350880 | 389880 | 402880 |
| դեղորայքի կողմնակի /տոքսիկ/ ազդեցության նվազեցման նպատակով կտրամադրվի հեռուկ /հյութ/ (474 հիվանդի ամսական 26 օր կտրամադրվի 400մլ բնական հյութ) | 88733 | 88732 | 88733 |
| ծննան ամիսների համար կտրամադրվի ջեռուցման ծախսերի փոխհատուցում (հիվանդների 50%-ին, ըստ կարիքների գնահատման, ծննան 3.5 ամիսների համար կտրամադրվի 15000 դրամի չափով օգնություն՝ ջեռուցման ծախսերի համար) | 24900 | 24900 | 24900 |
| բուժաշխատողի անմիջական վերահսկողության տակ դեղորայքի ընդունման համար կփոխհատուցվեն տրանսպորտային ծախսերը ՏԲ հիվանդներին, կամ բուժքույրերին, այն հիվանդների համար, որոնք ի վիճակի չեն այցելել բուժհաստատություն (տարեկան 175448 այց՝ | 175448 | 175448 | 175448 |

Հ.1/3

| | | | |
|---|---|---|---|
| մինչև 1 եվրո մեկ այցի համար) | | | |
| Կկազմակերպվեն կրթական միջոցառումներ՝ հիվանդների բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով (հոգեբաններից, սոցիալական աշխատողներից, բուժքույրերից կազմված մասնագետների խմբի կողմից) | 8171 | 8171 | 8171 |
| Կազմակերպական ծախսեր | 40000 | 40000 | 40000 |

6. Նախատեսվում է վերանորոգել Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի օդափոխության համակարգը, որի համար հատկացված է 241000 եվրոյին համարժեք դրամ: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2012 թվականին:

7. Տուբերկուլոզով հիվանդ ՀՀ քաղաքացիների անվճար բուժումն ապահովելու նպատակով ձեռք կներմուծվեն առաջին և երկրորդ շարքի դեղամիջոցներ՝ 2402877 եվրոյին համարժեք դրամ ներառյալ տեղափոխման և այլ լրացուցիչ ծախսերը (գումարի վճարումը կիրականացվի Գլոբալ հիմնադրամի կողմից ուղղակիորեն):

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| 1-ին շարքի հակատուբերկուլոզային դեղամիջոցներ | 60000 | 80000 | 80000 |
| 2-րդ շարքի հակատուբերկուլոզային դեղամիջոցներ | 534011 | 827073 | 821793 |

8. Հակատուբերկուլոզային դեղորայքի կողմնակի ազդեցության դեղերի ձեռքբերում՝ 130040 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ:

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Կողմնակի ազդեցության դեղամիջոցներ | 23290 | 42700 | 64050 |

Ն. 1/3

8

9. Դեղակայուն տուբերկուլոզի կառավարումն ուժեղացնելու նպատակով նախատեսվում է տարեկան 1 անգամ Կանաչ լույսի կոմիտեի փորձագետների այց Հայաստանի Հանրապետություն՝ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ 110766 եվրոյին համարժեք դրամ (գումարի վճարումը կիրականացվի Գլոբալ հիմնադրամի կողմից ուղղակիորեն):

| 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 36922 | 36922 | 36922 |

10. Տուբերկուլոզի ախտորոշման թեստերի, լաբորատոր ծախսանյութերի, բժշկական և վարակի վերահսկման պարագաների ձեռքբերման, ինչպես նաև ախտորոշիչ սարքավորումների պահպանման և վերանորոգման ծախսեր՝ 1004286 եվրոյին համարժեք դրամ:

| 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 368113 | 305134 | 331039 |

11. Տուբերկուլոզային կենտրոնների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 128800 եվրոյին համարժեք դրամ (ներառյալ նախագծում և փորձագիտական հսկողություն): Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2012 թվականին:

12. Տուբերկուլոզային կենտրոնների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ տուբերկուլոզի ծրագրի կենտրոնային կառավարման և վերահսկման նպատակով՝ 34500 եվրոյին համարժեք դրամ: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2012 թվականին:

13. Անբարեհաջող եղբով տուբերկուլոզային հիվանդների համար պալիատիվ խնամքի կենտրոնի ստեղծում՝ 67500 եվրոյին համարժեք դրամ՝ ներառյալ շինարարության նախագծում, նախագծման փորձաքննություն, շինարարություն, տեխնիկական վերահսկում: Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2014 թվականին:

Ն. 1/3

9

14. Անբարեհաջող եղբով տուբերկուլոզային հիվանդների համար պալիատիվ խնամքի կենտրոնի ստեղծում՝ 67500 եվրոյին համարժեք դրամ (ներառյալ շինարարություն, տեխնիկական վերահսկողություն): Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2013-2014 թվականներին:

15. Նախատեսվում է իրականացնել գործառնական հետազոտություններ՝ գնահատելու և բարելավելու ծրագրային ցուցանիշների առաջադիմությունը՝ 78000 եվրոյին համարժեք դրամ:

| 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 18000 | 30000 | 30000 |

16. Նախատեսվում է ձեռք բերել տուբերկուլոզի ախտորոշման ժամանակակից սարքավորումներ՝ MGIT Bactec960, ստացիոնար ռենտգեն, իրական ժամանակում ՊՇՌ սարքավորումներ՝ 269205 եվրոյին համարժեք դրամ: Սարքավորումների ձեռքբերումը նախատեսված է ծրագրի իրականացման 1-ին տարում՝ 2012 թվականին:

17. Ավտոմեքենայի ձեռքբերում՝ տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի գրասենյակի կողմից ծրագրի կառավարումն ու վերահսկումը ուժեղացնելու նպատակով՝ 10000 եվրոյին համարժեք դրամ: Ավտոմեքենայի ձեռքբերումը նախատեսված է ծրագրի իրականացման 2-րդ տարում՝ 2013 թվականին: Մեքենան հանձնվելու է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով՝ մնալով ՀՀ առողջապահության նախարարության հաշվեկշռում:

18. Տարեկան 2 անգամ նախատեսվում է իրականացնել խորխի տեղափոխում վերազգային ռեֆերենս լաբորատորիա որը գտնվում է Գերմանիայի Բորստել քաղաքում՝ լաբորատոր ախտորոշման որակի վերահսկողության նպատակով, որի համար նախատեսված է 9600 եվրոյին համարժեք դրամ:

| 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 2012թ. | 2013թ. | 2014թ. |

Ն. 1/3

| | | |
|---|---|---|
| 3200 | 3200 | 3200 |

19. Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է տարբեր փորձագետների խորհրդատվական/տեխնիկական աջակցության, աուդիտորական, թարգմանչական, հրատարակչական, լրասաբանման ծառայությունների ձեռք բերում՝ 133157 եվրոյին համարժեք դրամ:

| 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|
| 26214 | 60514 | 46429 |

Դրամաշնորհային ծրագիրը բաղկացած է 2 մակրոնպատակներից՝

1. Ուժեղացնել տուբերկուլոզի ազգային ծրագիրը (դասընթացների/վերապատրաստումների կազմակերպում, տեխնիկական/խորհրդատվական աջակցություն; շինարարություն, վերանորոգում; սարքավորումների, բժշկական և լաբորատոր պարագաների, դեղամիջոցների ձեռքբերում):

Սույն նպատակի բյուջեն ծրագրի իրականացման առաջին 3 տարիների ընթացքում ըստ եռամսյակների (եվրոյին համարժեք դրամ)՝

| ժամանակահատված | եվրոյին համարժեք դրամ |
|---|---|
| I եռամսյակ | 719522 |
| II եռամսյակ | 215281 |
| III եռամսյակ | 748074 |
| IV եռամսյակ | 152354 |
| V եռամսյակ | 836773 |
| VI եռամսյակ | 313930 |
| VII եռամսյակ | 310141 |
| VIII եռամսյակ | 180756 |
| IX եռամսյակ | 830419 |
| X եռամսյակ | 367043 |
| XI եռամսյակ | 276235 |
| XII եռամսյակ | 179882 |

2. Բարձրացնել տուբերկուլոզով հիվանդների ախտորոշման և բուժման



արդյունավետությունը (տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցություն, հասարակության իրազեկում):

Սույն նպատակի բյուջեն ծրագրի իրականացման առաջին 3 տարիների ընթացքում ըստ եռամսյակների՝

| ժամանակահատված | եվրոյին համարժեք դրամ |
|---|---|
| I եռամսյակ | 202231 |
| II եռամսյակ | 252010 |
| III եռամսյակ | 219213 |
| IV եռամսյակ | 213292 |
| V եռամսյակ | 215278 |
| VI եռամսյակ | 274181 |
| VII եռամսյակ | 227307 |
| VIII եռամսյակ | 227867 |
| IX եռամսյակ | 241553 |
| X եռամսյակ | 262757 |
| XI եռամսյակ | 239838 |
| XII եռամսյակ | 205074 |

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

Ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում ըստ ստորև նշված ծրագրային նպատակների նախատեսվում է ձեռքբերել կամ ներմուծել ապրանքներ և ծառայություններ՝ 7393437 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ:

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| **Տուբերկուլոզի կառավարման ազգային կարողությունների ուժեղացում**<br>- Բուժաշխատողների վերապատրաստում,<br>- ՏԲ ոլորտի ղեկավարների վերապատրաստում<br>- Տեղային և արտասահմանյան փորձագետների խորհրդատվական/տեխնիկական աջակցություն<br>- Բժշկական կահույքի և պարագաների ձեռքբերում հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի վերանորոգված բաժանմունքների համար<br>- Տուբերկուլոզային բուժհաստատությունների վերանորոգում/շինարարություն<br>- Տուբերկուլոզի կառավարումը ուժեղացնելու նպատակով համակարգչային սարքավորումների ձեռքբերում<br>- Ծրագրի արդյունավետության բարձրացմանը ուղղված հետազոտություններ և այլ միջոցառումներ | 626500 | 356789 | 344659 |
| **Տուբերկուլոզի դեպքերի ախտորոշում և դեղակայունության հսկողություն**<br>- Բուժսարքավորումների սպասարկում<br>- Թեստերի, լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում<br>- Ախտորոշիչ սարքավորումների, մեքենայի ձեռքբերում | 441216 | 187495 | 183884 |
| **Ռեգուլյար և դեղակայուն տուբերկուլոզի բուժում**<br>- 1-ին և երկրորդ շարքի դեղորայք<br>- Կողմնակի ազդեցության դեղամիջոցներ Բժշկական/լաբորատոր ծախսանյութեր | 767515 | 1097316 | 1125035 |
| **Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցություն**<br>- Սոցաշխատողների վերապատրաստում<br>- Սոցիալական աջակցության տրամադրում բուժման մեջ գտնվող հիվանդների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով /հիգիենիկ և սննդային փաթեթների տրամադրում, դեղորայքի | 699364 | 727132 | 740132 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով բնական հյութերի տրամադրում, տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, ջեռուցման ծախսերի փոխհատուցում/ | | | |
| | | **Հասարակության իրազեկում, լուսաբանում և ջատագովում**<br>- Տուբերկուլոզի վերաբերյալ իրազեկման նյութերի մշակում, նյութերի տպագրում, ինֆորմացիոն հոլովակների պատրաստում, հեռարձակում հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով | 8400 | 53000 | 35000 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն **517574 եվրոյին համարժեք դրամ.** | | | |

| Նկարագրություն | 2012թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2013թ. /եվրոյին համարժեք դրամ/ | 2014թ. /եվրոյին համարժեք դրամ/ |
|---|---|---|---|
| Համակարգող խմբի աշխատավարձեր (ներառյալ հարկերը) | 128025 | 136404 | 140427 |
| Աշխատակիցների բժշկական ապահովագրություն | 3500 | 3500 | 3500 |
| Ավտոմեքենաների տեխնիկական պահպանման, ապահովագրության, վառելիքի ծախսեր | 6284 | 6284 | 6284 |
| Գրասենյակային ծախսեր (կոմունալ ծառայություններ, գրասենյակային պարագաներ) | 2000 | 2000 | 2000 |
| Տարածքի վարձակալություն | 22857 | 0 | 0 |
| Գործուղումներ | 10600 | 10600 | 10450 |
| Աուդիտորական ծառայություններ | 5715 | 5715 | 11429 |

մ. 1/3



| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի<br>- ՀՀ ֆինանսների նախարարության<br>- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության<br>- ՀՀ առողջապահության նախարարության,<br>- Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ենթակայության բժշկական հաստատությունների (պոլիկլինիկաներ, Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր և այլ բժշկական հաստատություններ)<br>- Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ ՊՈԱԿ-ի<br>- Հայկական Կարմիր Խաչի ընկերություն ՀԿ-ի<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ ֆինանսների նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար — Հ. Հարությունյան

մ. 1/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

մ. 1/3

17.01.12 №3/3.8-1/284-12

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան 16.01.12թ. ԱԳ/15-1/163-12 գրության և հիրումն մեր 12.01.2012թ N 3/3.8-1/338-12 գրության՝ կապված <<ՀՀ տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում>> դրամաշնորհային ծրագրի լրամշակված տարբերակի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

N 034/986-12
17-01-12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ձր. 1/3

0078 Երևան, Հալաբյան 41 ", հեռ. 380385
էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

N 8459-11
29.12.11թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի
15/15.4/20937-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

N 035/38903-11
29.12.11թ.

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐ

ձր. 1/3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

29.12.11թ N ՀՏ/15-1/12192-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.12.2011թ. թիվ 15/15.4/20937-11 գրության՝ հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԽ իրավաբան
Մարիամ Էլիբեկյան
Հեռ.՝ 54 36 51

N 020/38985-11
29.12.11թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Ա-1/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ՀՀ/3-4/127-12
12. 01.12թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.12.2011թ. թիվ 15/15.4/20937-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի իրականացման վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենք և կարևորում ենք այդ ծրագրի դերը ՀՀ-ում տուբերկուլյոզի կառավարման գործում: Սակայն հաշվի առնելով ծրագրի բյուջեի մեծությունը, ծրագրում ներառված մի շարք ենթածրագրերի առկայությունը, ինչպես նաև ծրագրի դրամաշնորհային լինելու հանգամանքը, կարծում ենք, որ ծրագրի բարեգործական որակման հարցը լրացուցիչ քննարկման կարիք ունի ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որը ՀՀ բյուջետային և հարկային քաղաքականություն մշակող լիազոր մարմինն է հանդիսանում: Նպատակահարմար համարվելու դեպքում՝ ծրագիրը կարող է ներկայացվել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

N 044/576-12
13.01.12թ.

Ա-1/3

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ 2012 թ.հունվարի 11-ի N 3/3.8-1/10-12 գրությամբ հայտնում են.<br>1. որոշման նախագծի 1-ին կետում և կից ներկայացված ծրագրի 6-րդ կետում առկա է գումարային անհամապատասխա-նություն՝ որոշման նախագծում նշված է 7,911,011 ՀՀ դրամ, իսկ կից ներկայացված ծրագրում՝ 7,911,011 եվրոյին համարժեք ՀՀ դրամ,<br>2. ծրագրի 9-րդ կետի 1-ին ենթակետով նշված բացվածքում պարզ չէ, թե ինչ կարգով են ընտրվելու դասընթացների մասնակիցները,<br>3. ծրագրում նշված չէ, թե ծրագրի ավարտից հետո ում է պատկանելու ձեռքբերվող ավտոմեքենան: | - Նախագծում ավելացվել է «եվրոյին համարժեք դրամ» բառերը:<br>- Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում և ծրագրի լրամշակված տարբերակը:<br>- 2012թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/284-12 գրությամբ նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են.<br>Կից ներկայացված ծրագրի իրականացման վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենք և կարևորում ենք այդ ծրագրի դերը ՀՀ-ում տուբերկուլյոզի կառավարման գործում: Սակայն հաշվի առնելով ծրագրի բյուջեի մեծությունը, ծրագրում ներառված մի շարք ենթածրագրերի առկայությունը, ինչպես նաև ծրագրի դրամաշնորհային լինելու հանգամանքը, կարծում ենք, որ ծրագրի բարեգործական որակման հարցը լրացուցիչ քննարկման կարիք ունի ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որը ՀՀ բյուջե-տային և հարկային քաղաքականություն մշակող լիազոր մարմինն է հանդիսանում: Նպատակահարմար համարվելու դեպքում՝ ծրագիրը կարող է ներկայացվել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը: | Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում և ծրագրի լրամշակված տարբերակը: |

Ար 1/3


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 10) 52 68 44
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. կայք՝ *info@moh.am*


13/01.12 N ՁՀ/15-1/163-12

Ձեր N ____________________

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջանջուղազյան

ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր Սիմոնյանի 29.12.11թ. N 15/15.4/20937-11 գրությամբ ներկայացված «ՀՀ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ Ձեր կողմից կատարված դիտողությունների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

1. ծրագրի 9-րդ կետի 1-ին ենթակետով նշված դասընթացների մասնակիցների ցանկերը կազմվում են «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից՝ տուբերկուլոզային և առողջության առաջնային պահպանման հաստատությունների վերջին 3 տարիների ընթացքում վերապատրաստում չանցած մասնագետների ցուցակների հիման վրա, որոնք տրամադրվում են գրասենյակին մարզային առողջապահության վարչությունների, ինչպես նաև Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի կողմից: Դասընթացներում ընդգրկվող մասնակիցների ցանկերը համաձայնեցվում են նաև ՀՀ առողջապահության նախարարության հետ,
2. ծրագրի շրջանակներում ձեռքբերվող ավտոմեքենան անհատույց օգտագործման իրավունքով հանձնվելու է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ մնալով ՀՀ առողջապահության նախարարության հաշվեկշռում:

Կից ներկայացվում է ծրագրի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 14 (տասնչորս) թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ս. ՔՐՄՈՅԱՆ


Կատարող՝ ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԽ
Քրիստինե Խաչատրյան
Հեռ. 54 36 51


N020/735-12
13.01.12թ

***ՆԱԽԱԳԻԾ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**—— ———— 2012 թվականի N Մ- -Ա** Ար-1/4

**քաղ. Երևան**

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 18-ի N 3.8- 1/343-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 19-ի N 180-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N ՀՔ/22/186-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-6/187-12, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից իրականացվող՝ 44160 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովման)» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը

 Ար-1/4

մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ

տնօրեն՝ ............ Կանո Տեր-Պետրոսյանի կողմից

«11» հունվարի 2012թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը՝ երիկամների վաղահաս ամիլոիդոզը-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կանխելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153, «Արաբկիր» բժշկական համալիր, ՀՀ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոն: |



| | | |
|---|---|---|
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 44.160 եվրոյին համարժեք դրամ:<br><br>դեղորայք - «կոլխիցին» 1 մգ - 460.000 հաբ(23.000 տուփ, 1տուփը 20 հաբ)՝ 44.160 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ (ներառյալ տրանսպորտային ծախսերը)<br>(Ձեռք է բերվելու Ֆրանսիայում) |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են ՀՀ բոլոր մարզերի, ԼՂՀ-ի և Ջավախքի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2012թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2012թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2012թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 2019 և նոր հայտնաբերված մոտ 300 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողությունը և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ Ֆրանսիայից գնելու է 460.000 հաբ «Կոլխիցին» 1մգ դեղորայքը, Փարիզ-Երևան օդանավով տեղափոխելու է Երևան և հանձնելու պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար:<br>Մոտ 44.160 եվրոյին համարժեք դրամի ընդհանուր արժողությամբ 460.000 հաբ «Կոլխիցին» 1մգ դեղորայքի ներմուծում՝ որպես հումանիտար բեռ: |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տրանսպորտային ծախսեր՝ ընդհանուր գումարի 3%-ի չափով: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններ , պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ: |

Ա-1/4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ա-1/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.01.12 №3/3.8-1/343-12

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.01.12թ. N 15/15.4/211-12 գրության՝ կապված <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012թ. ընթացքում իրականացվող <<Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (Անվճար դեղորայքով մշտական ապահովում) ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, հետևյալը.

1. Հաշվի առնելով ներկայացված ծրագրով Լեռնային Ղարաբաղում բնակվող շահառուներին ընդգրկված լինելու հանգամանքը, առաջարկում ենք որոշման նախագծում ներառել նաև ԼՂՀ-ի կառավարությանը,

2. ծրագրի 11-րդ կետում նշել կազմակերպչական աշխատանքները և դրանց համար նախատեսված գումարը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

3

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

N 034/1098-12
18.01.2012թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

մ. 1/4

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

19.01.12թ.
N 180-12

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի**
**15/15.4/211-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

N 035/1177-12
19.01.201

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

մ. 1/4

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

16.01.12 N ՀՔ/22/186-12
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.01.2012 թ. թիվ 15/15.4/211-12 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականին իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող Ն.Փափախչյան*
*հեռախոս 52 27 21*

N 020/815-12
16.01.12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Hr. 1/4

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N ՊԵԿ/3-6/187-12
13.01.12թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հունվարի 12-ի համար 15/15.4/211-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականին իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

N 044/691-11
13.01.12թ.

Hr. 1/4

## ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովման)» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.<br>1. Հաշվի առնելով ներկայացված ծրագրով Լեռնային Ղարաբաղում բնակվող շահառուներին ընդգրկված լինելու հանգամանքը, առաջարկում ենք որոշման նախագծում ներառել նաև ԼՂՀ-ի կառավարությանը,<br>2. ծրագրի 11-րդ կետում նշել կազմակերպական աշխատանքները և դրանց համար նախատեսված գումարը: | - ԼՂՀ-ի կառավարությունը ներառված է նախագծի 3-րդ կետում:<br>- Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում: |
| | |
| | |

ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
HOWARD KARAGHEUSIAN MEDICAL BENEVOLENT
SOCIAL ORGANIZATION
ՀՀ ԵՐԵՎԱՆ-0047, ՆՈՐՔԻ ԱՅԳԻՆԵՐ 180, ՀԵՌԱԽՈՍ 65-56-12, 65-56-22, 65-56-30, ԷԼ.ՓՈՍՏ hkcc@web.am
RA YEREVAN-0047, NORKI AYGINER-180,TEL:65-56-12,65-56-22,FAX:(3741)-653-902, E-MAIL hkcc@web.am

N 1/4

No 06/12 "19" 01.2012թ.

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ՝
պրն. Ա. Ջանջուղազյանին

Պատճենը՝ ՀՀ Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգարժան պարոն Ջանջուղազյան

Ի պատասխան Ձեր 18.01.12թ. №3/3.8-1/343-12 գրության տեղեկացնում ենք, որ 12.01.12թ.-ին ներկայացված «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովման)» բարեգործական ծրագրի 11-րդ կետում մենք արդեն նշել ենք, որ կազմակերպական ծախսերի համար նախատեսված է ընդհանուր գումարի 3% - ի չափով, որը կազմում է 1325 եվրոյին համարժեք դրամ: Բեռը գալուց հետո, որպես կանոն, ուղեկցող փաստաթղթերի հիման վրա կատարվում է ծախսերի ճշգրտում, և այդ ժամանակ նշված 3% - ի դրամական արտահայտությունը կլինի առավել ճշգրիտ:

Հարգանքներով՝

Կ.Տեր-Պետրոսյան
«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ տնօրեն

<< ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
094/1214
«19» 01 2012

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

———— 2012 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

N 1/5

### «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 18-ի N 3/3.8-1/347-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 19-ի N 179-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N ՀՔ/22/187-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 16-ի N ԱԱ/3-4/250-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 16-ի N 01/106-12, Սյունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի 16-ի N 01/93-12 ու Լոռու մարզպետի 2012 թվականի հունվարի 17-ի N 101/104.3.2/208-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից իրականացվող՝ 436473000 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԷՍՁԵԹ Ֆարմա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2012 թվականի հունվարի 10-ին կնքված՝ N 01/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական պարագաների մատակարարում՝ 5040000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

Ա-1/5

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետներին, Գյումրու, Վանաձորի ու Գորիսի քաղաքապետերին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ

տնօրեն ............... Կամո Տեր-Պետրոսյանի կողմից

«11» հունվարի 2012.թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն<br>«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով հիմնված 6 մասնաճյուղ մանկական ատամնաբուժական դարմանատները և 6 ակնաբուժական կաբինետները, որտեղ պայմանագրային հիմունքներով աշխատում են կազմակերպության կողմից վարձատրվող, տվյալ քաղաքներում բնակվող 29 ատամնաբույժներ, 7 ակնաբույժներ, 52 միջին բուժաշխատողներ (բուժքույրեր), 10 կրտսեր բուժաշխատողներ, 6 վարչական և 31 օժանդակ աշխատակիցներ:<br>Դարմանատներից 3-ը (Երևանի-2 և Վանաձորի) աշխատում են երկհերթ, իսկ 3 -ը (Գյումրիի,Գորիսի և Ստեփանակերտի)՝ մեկ հերթով:<br>Դարմանատներում գործում են 21 ընդհանուր ատամնաբուժական, 6 ակնաբուժական, 5 ռենտգեն, 6 ախտահանման կաբինետներ և 6 գրանցման բաժիններ՝ բոլորն էլ հագեցած ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժանյութերով: |

Ա-1/5

| | | |
|---|---|---|
| | | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀԿՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից:<br>2012թ. համար նախատեսված է 436.473.000 դրամի ծախսեր՝ ըստ եռամսյակների բաշխված է հավասարաչափ՝ 25-ական տոկոս (109.118.250-ական դրամ), իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. |

| | Դրամ |
|---|---|
| ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ոսպնյակներ. | 102 225 000 |
| բ) բուժանձնակազմի աշխատավարձեր, սոցիալական վճարներ. | 260 254 500 |
| գ) վարչական աշխատակիցների աշխատավարձեր, սոցվճարներ | 33 831 000 |
| դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարծ, ինտերնետ, աղբահանություն, գազ). | 11 025 000 |
| ե) տրանսպորտային ծախսեր | 3 806 250 |
| զ) շենքերի պահպանության ծախսեր | 3 825 000 |
| է) գրասենյակային ծախսեր | 2 118 750 |
| ը) աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության, ադմինիստրատիվ և աուդիտորական ծախսեր | 11 253 750 |
| թ) գործուղման ծախսեր | 1 181 250 |
| ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր | 2 662 500 |
| ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառույթների և չնախատեսված ծախսեր | 4 290 000 |
| Ընդամենը | 436 473 000 |



| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր դարմանատներ ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու նպատակով: Սպասարկվում են նաև նույն մարզերի սահմաններում տվյալ քաղաքների տարածքից դուրս բնակվող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2012թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում 2012թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 94208 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում նոր հաշվառվող 11.000-12.000 երեխաների լրիվ ատամնաբուժական սանացիայի և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը:<br><br>Ակնաբուժական 6 կաբինետներում նախատեսվում է հաշվառված 6961դիսպանսեր հիվանդների ընթացիկ ակնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, նոր հաշվառվող 1.700-1.800 երեխաների ակնաբուժական մանրակրկիտ հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի անհրաժեշտություն ունեցող 1.600-1.700 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, օպտիկական ոսպնյակների անհրաժեշտություն ունեցող 15-20 երեխաների անվճար ոսպնյակներով ապահովում և մշտական դեղորայքային բուժման անհրաժեշտություն ունեցող 1000-1100 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում:<br>Ընդհանուր առմամբ 2012թ. նախատեսվում է 112.000-114.000 ատամնաբուժական և 25.000-26.000 ակնաբուժական հաճախումների լիարժեք ապահովում: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2012թ. բուժ սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար պայմանագրեր ենք կնքելու ԱՄՆ «Շայն» ընկերության, Երևանում «էլդեքս» ՓԲԸ, «էսզեթ Ֆարմա» ՍՊԸ, ՀՀ «Լաէկա» ՍՊԸ, «Մայր Օպտիկ» ՍՊԸ հետ:<br>ԱՄՆ-ից պիտի գնվեն 18.000.000 դրամի բժշկական պարագաներ և դեղորայք, որոնք Երևան են տեղափոխվելու Միացյալ Հայկական Ֆոնդի միջոցով, իսկ Երևանում պիտի գնվեն 84.225.000 դրամի բժշկական պարագաներ, սարքեր, կահույք, դեղորայք, ակնոցներ, ոսպնյակներ:<br><br>«էսՁեթ Ֆարմա» ընկերության հետ 10.01.2012թ. կնքված ատամնաբուժական դեղամիջոցների մատակարարման N01/2012 պայմանագիր 5.040.000 դրամ ընդհանուր արժողության, առանց ԱԱՀ-ի: 20%- ԱԱՀ-ը կազմում է 1.008.000 դրամ:<br>Հումանիտար բեռների ստացում: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 71.331.000 դրամ (որից 33.831.000 դրամը վարչական աշխատակիցների աշխատավարձեր և 37.500.000 դրամը՝ տնտեսական), որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի (436.473.000) 16,34%: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետարանների առողջապահության վարչությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզպետարանների առողջապահության վարչություններ, ՀՀ հարկային ծառայություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներ: |

Ա-1/5

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-1/5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.01.12 №3/38-1/347-12

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.01.12թ. N 15/15.4/210-12 գրության՝ կապված <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012թ. ընթացքում իրականացվող <<Երեխաների անվճար բժշկական օգնություն>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ հաշվի առնելով ներկայացված ծրագրով Լեռնային Ղարաբաղում բնակվող շահառուներին ընդգրկված լինելու հանգամանքը, առաջարկում ենք որոշման նախագծում ներառել նաև ԼՂՀ-ի կառավարությանը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

N034/1102-12
18.01.12թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՃՐ 1/5

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

19.01.12թ. N 179-12

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի**
**15/15.4/210-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

N 035/1178-12
19.01.12թ.

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐ

ՃՐ 1/5

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

16.01.12 N ՆԽ/22/187-12

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.01.2012 թ. թիվ 15/15.4/210-12 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող Ն.Փափախչյան*
*հեռախոս 52 27 21*

N 020/814-12
16.01.12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ-1/5

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ՊԿ/3-4/250-12
16.01.12թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.01.2012թ. թիվ 15/15.4/210-12 գրությանը կից ներկայացված «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

N 044/884-12
16.01.12թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Մ-1/5

«16» 01 2011թ.
N: 01/106-12

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 12.01.2012թ.
թիվ՝ 15/15.4/210-12

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

N 116/781-12
16.01.12թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ձր 1/5

3301ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am


"16" 01 2012թ. № 01/93-12

Ձեր 2012-01-12 № 15/15.4/210-12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանում քննարկվել է «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը:

Առարկություններ և առաջարկություններ չեն եղել:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարող՝ Ա. Ծատրյան
Հեռ. 0285-2-35-10

N117/833-12
16.01.12թ

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ձր 1/5

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

/0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77


թիվ 101/104.3.2/208-12

«17» 01 2012 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 12.01.2012թ. թիվ 15/15.4/210-12 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացրել Լոռու մարզում: Մեծաթիվ անապահով ընտանիքներ օգտվել են կազմակերպության ատամնաբուժական և ակնաբուժական անվճար ծառայություններից:

Կարևորում եմ նաև կազմակերպության կողմից իրականացվող՝ 436473000 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը և չեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

N 114/944-12
17-01-12թ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**___ հունվարի 2012 թվականի N Մ -      -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի -ի N -12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի -ի N ԱԱ/3-4/-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի -ի N -12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 6159374 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի խմելու ջրի խողովակաշարի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պառեքս-գազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03527967) 2011 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ N WVA/VAR ADP/CW 12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 6159374 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

